

ՔՐԻՍՏԻՆԵ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՍԵՎ ԹՈՒՂԹ

(բանաստեղծություններ)

ԵՐԵՎԱՆ



ԱՐՄԱՎ 2014

ՀՏԴ 891.981-1 Հովսեփյան
ԳՄԴ 84Հ - 5
Հ 872

Հրատարակվել է պետական աջակցությամբ

Խմբագիրներ՝ Արմեն Ավանեսյան
Շանթ Մկրտչյան

Հովսեփյան Քրիստինե
Հ 872 Սև թուղթ: Բանաստեղծ./ Ք. Հովսեփյան.- Եր.:
Արմավ, 2014. - 88 էջ:

ՀՏԴ 891.981-1 Հովսեփյան
ԳՄԴ 84Հ - 5

ISBN 978 - 9939 - 9107 - 0 - 3

© Հովսեփյան Քրիստինե, 2014
© Արմավ, 2014

Եղբորս՝ Վարդան Եովսեփյանի
լուսավոր հիշատակին.

ՀՐԴԵՀՎԱԾ ՀՈԳԻ

Ժամանակակից հայ գրականության մեջ պետք է զանազանել ստեղծագործող և գրող հասկացությունները: Առաջինն առավել փորձարարական է, այնինչ գրող լինելը խարանի նման է: Հատկապես մեր օրերում, երբ կյանք-գրականություն սահմանազատումն առավել քան շոշափելի է:

Քրիստինե Հովսեփյանը ստեղծագործող անհատականություն է, ով այս գրքով խոստանում է ապագայում իր ձակատին գրողի խարանը կրելու: Անշուշտ կենսափորձն ու ճանաչողության սահմանները ժամանակի հետ կընդլայնվեն և նոր գույներ ու երանգներ, իմացական նոր շերտեր ի հայտ կգան Քրիստինե Հովսեփյանի բանաստեղծություններում:

Բանաստեղծուհին դրսևորում է իր զգացումներն ու ապրումները, իմանալով բառի էներգիան, հաղորդակցվելով իր ներաշխարհից եկող տարերքի հետ և այս դեպքում տողը դառնում է ինքնաձանաչման ձանապարհ: Այդ ձանապարհը Քրիստինե Հովսեփյանն անցնում է հպարտ և, որքան էլ ներանձնական լինի բանաստեղծության ասելիքը, որքան էլ ես-ի գերակայությունը տարածվի բնագրի ներքին և արտաքին սահմաններում, այնուամենայնիվ, ասելիքը դուրս չի գալիս գեղարվեստի շրջանակներից:

Քրիստինե Հովսեփյանի «Սև թուղթ» ժողովածուի բանաստեղծություններն անկեղծ խոստովանանք-զրույցներ են ընթերցողի հետ: Կյանքին դեմ հանդիման մարդը որոնում է իր տեղը, քանզի ժամանակի աշխարհաբաղաբա-

կան փոփոխությունները, կյանքի անընդհատական հոսքը վարարած գետի նման խարխլում են անցյալում ամուր թվացող հիմքերը:

*Եվ հեռուներում
Խարխափող մի ցավ,
Խոր գիշերներում՝ լույսի փշրանքեր...
Թախիծ ու ժպիտ և սեր, որ անցավ...*

Մարդը մնում է անխուսափելի կորստյան առջև մեն-մենակ: Եվ միայնությունը դառնում է հոգևոր կեցություն: Բանաստեղծի միայնության կերպը նկատումը զուգահեռվում է խստակեցության հետ: Չկա չարություն աշխարհի, մարդկանց հանդեպ, բնության գեղեցկությունը անընդհատ ներկա է և հոռետեսության ու արգելապատնեշի ոչ մի նշույլ: Մարդն ընդունում է ի վերուստ իրեն կանխորոշվածը.

*Ահա ես...
Թերթատված մի մանուշակ՝
Յողունն էլ կոտրած...*

կամ՝

*Ինչո՞ւ եմ թաց...
Ինչո՞ւ եմ սառած...
Մի՞թե մոլորակի վրա
Չունեմ իմ խաղաղ
Անկյունը...*

Գրքի խորագիրը՝ «Սև թուղթ», սև գույնի և այրված թղթի խորհուրդն ունի: Ճիշտ է, սևը գերիշխող չէ բանաս-

տեղծություններում, գունային հարուստ ներկայանակ է տեսանելի պատկերներում, սակայն ինքնայրումը, այս դեպքում՝ հրդեհված հոգին տեսանելի է գրեթե բոլոր գործերում: Սևը քողարկում է ես-ի ընդգրկումը և նման կերպ բնագրին հարուստ ենթաշերտերի հնարավորություն տալով.

*Մի օր, վատահ եմ,
Կգտնեմ այն վայրը,
Ուր դու ներկա ես...
Վաղուց հոգնել եմ, Հա՛յր,
Հորինած իմ կապույտից...*

Կյանքը միանշանակ չէ: Այն տարընկալումների բազմաձայնությունների անվերջանալի շղթա է: Գոյի ու լինելության խնդիրները նոր հարցականներ են առաջ քաշում: Եվ համատարած քառուսում, երբ ոչինչ ձանաչելի չէ, տիեզերքի խավարը՝ սևը, լույսով է ողողվում՝ նոր գույն ծնելով. ահավասիկ երկինքը.

*Մի օր կգամ, Հա՛յր...
Այդտեղ կապույտը
Հորինովի չէ...
Մեր կապույտը, Հա՛յր...*

Գրքի բոլոր բաժինները՝ «Ճմութած», «Այրած», «Պատառոտած» և «Թաց», անմիջական կապ ունեն թղթի հետ: Թուղթը՝ հոգին է՝ «մաքուր գրատախտակը», բաժինների անվանումները հոգեվիձակներ են արտահայտում, և յուրաքանչյուր շարք կառուցված է որոշակի տրամադրությունների գերակայությամբ:

Բանաստեղծության թեմաներն են սերը, ընտանիքը, հայրենիքը, որոնք զուգահեռվում են ժամանակի ու տարածության գեղարվեստական չափումներում: Զարմացնելու ոչ մի ձիգ, ոչ մի սեթևեթություն, ոչ մի մտախճողում: Բայց առկա է խոհը, առկա է ապրումը և անշուշտ, երբեմն զարմանալի պատկերներ. «Քո ժպիտը // Պահեցի բերանումս», «Կողքիս ծիրանենին է // Կանաչ սևանում...», «Իմ ու իմ միջև - // Վարագույր է սև» և այլն:

Մնում է հավատալ, որ Քրիստինե Հովսեփյանի բանաստեղծություններում առկա «կրակված հոգին» կջերմացնի ընթերցողներին և գիրքը կհասնի իր հասցեատիրոջը:

ԱՐՄԵՆ ԱՎԱԼԵՍՅԱՆ

բանասիրական գիտությունների թեկնածու



ՀՄՌԹԱԾ

ԽԵԼԱԳԱՐՈՒԹՅՈՒՆ

Ջերմում եմ նորից.
Խմում եմ տաք թեյը
Միայնության մեջ.
Այրվում է լեզուս...
Անուր սեղմում եմ ատամներս,
Որ ձկան փշի պես
Կոկորդս խրված
Անունդ չտամ...
Նկարդ եմ պատռում որերորդ անգամ,
Այրում,
Լցնում թեյիս մեջ ու
Խմում մոխրացած սպասունս...

Բարձս է արտասվում ձշալով,
Անիծում ինձ, իր բախտը,
Աշխարհին...
Այն՝ այս սև սենյակի
Միակ իմ վկան,
Գուշակել է՝
Ես խելագար եմ.

Վստահում եմ մոխրախառն թեյիս...
Հավատալով, որ
Կիջնի ջերմությունս...
Փուշը, հագս...
Հարբուխս...
Դողէրոցքս...
Սև լեզուս...

Ատամներս արքանված...
Քո ձայնը... կինը՝
Կողքիդ հևացող...

Դժոխքի դարպասներն են
Իմ առջև բացվում,
Ու խավարում՝
Աստծո արցունքն է,
Եվ սատանայի քրքիջը լկտի...

ՄԵՎ ԹՈՒՂԹ

Լսիր...
Գիտեմ, վաղուց խլացել ես...
Լսիր աչքերով,
Շուրթերով,
Մտքով,
Սրտով...
Աստծու սիրուն,
Ինչով ուզում ես,
Միայն թե լսիր.
Ես հրկիզել եմ մեր ննջարանը,
Կոտրել պատուհանները,
Պատառոտել բարձերն ու
Սավանները թաց...
Ես մրսում էի...
Հիմա հատակին եմ քնում.
Ջարդուփշուր է եղել մահձակալդ հին
Ու դու... մենք
Այլևս ոչինչ չունենք...
Ես միայնակ գլուխս կպահեմ...
Իսկ դ՞ու...
Դու ի՞նչ ես անելու,
Եթե հանկարծ գաս...

ԱՅՍ ՄՆԱՅ...

Եվ հեռուներում
Խարխափող մի ցավ,
Խոր գիշերներում՝ լուսի փշրանքեր...
Թախիծ ու ժպիտ և սեր, որ անցավ...

Երկնային աչքեր՝
Մութ ու անպամած...
Մի լացող ժպիտ,
Հանդիպման հույսեր...

Կորստյան բութ ցավ.
Չսպիացած վերք...

Ինձ՝ ամպ ու քամի,
Իսկ ուրիշներին՝
Լույս ծիածաններ...

Այս մնաց ձեզնից
Երկնքի աչքեր...

ՍԱՌՅԵ ԹԱԳՈՒՀԻ

Աշուն...

Փշրիր սիրտն իմ տերևներիդ պես,
Քամիդ թող շաղ տա փշրանքներս...

Անձրևներ...

Լվացեք փոշին սև աչքերիս,
Լիզեք թախիծը շրթունքներիցս...

Քամիներ...

Ձմեռվա շնչով
Մարեք կրակը հոգուս բոցավառ...

Դառնամ հեքիաթի

«Սառցե Թագուհի»-ն,
Էլ գարուն չկա իմ սրտի համար...

ԳՐԻՉՆ ԻՄ ԹԱՅ ՈՒ ՏԵՏՐԸ՝ ՍԵՎ

Քաշում եմ գլխիս
Վերմակս բաժանման
Ու դողում ամբողջ մարմնով...

Ինչո՞ւ ես տնքում, ժամացույց.
Ժամանակիդ վերքն եմ չբուժված...

Ո՞վ է զանգում ինձ
Այս ուշ գիշերով..
Նամ...
Չէ, այլևս ես չունեմ հավատն այն՝
Սևացավ նույնիսկ կապույտը ներսիս...
Մեկն ինձ հիշում է սակայն,
Ահարկու շնչից մենության
Դողում եմ այնպես, որ
Սարսափում եմ բացել
Վերմակս...

Ես իմ վերմակով պիտի ծածկվեմ,
Ու ինձ հետ պահեմ իմ գրիչը թաց
Ու սև տետրն իմ.
Ա՛յ, թե ովքեր են
Միշտ հավատարիմ...

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՐԴԵՀՎԱԾ ՀՈԳԻ 5
Արմեն Ավանեսյան

ՃՄՌԹԱԾ

ԽԵԼԱԳԱՐՈՒԹՅՈՒՆ 11
ՍԵՎ ԹՈՒՂԹ 13
ԱՅՍ ՄՆԱՅ... 14
ՍԱՌՅԵ ԹԱԳՈՒՀԻ 15
ԳՐԻՉՆ ԻՄ ԹԱՅ ՈՒ ՏԵՏՐԸ՝ ՍԵՎ 16
13.02.2003 - 13.02.2013 17
ԳՈՒ... ԵՍ 19
BONJOUR ՈՒ ԲԱՐԵՎ 20
ԴԱԴԱՐ ՏՈՒՐ... 21
ԿԵՂԾԻՔ - ՊՍԱԿ 22
ԻՆՉՈՒՆԵՐԻ ՊԱՐ 23
ԱՐՀԱՎԻՐՔ 25
Ես երեկ 26
Մի օր, վստահ եմ 27
ՄԱՐՏԻ 8-Ի «ՆՎԵՐԳ»... 28
«ДЕТСКИЙ СОН» 30
ՀԱՅՐԵՆԻ ԶԵՌՔԵՐԸ 32
ԻՄ ՃԱՆԱՊԱՐՀԸ 33
ՔԵԶՆԻՅ ՄՆԱՅԱԾ ԿՅԱՆՔԻՆ ԸՆԴԱՌԱՋ 34

ԱՅՐԱԾ

ՆԱՅՈՒՄ ԵՍ... 37
ՍԵՎ ՔԱՅԼ 38

ՆԵՐՈՒՄ ԵՄ	39
ՄԻԱԿՆ, ՈՎ ՄԻՐԵՅ ԻՆՁ	40
ՄԱՔՐԱԳՐԻՐ... ԻՆՁ	41
ՏԱՄ ՍԵՎԴ	42
ՎԵՐՅՐՈՒ	43
ԹԵՐԵՎՍ... ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ	44
ՄԵՌՆԵԼՈՒ ԵՄ... ԿԻՍԱՏ	45
ՆԵՏԻՐ ԳԺՈՒՔ	46
ԴՈՒ ԵՎ ԵՍ	47
ԵՄ ԳԻՏԵՄ ԱՅՍ ՈՏՆԱԶԱՅՆԸ	48
ԱԶԱՏԻՐ ԻՆՁ	50
ԳՐՈՂԻ ԾՈՅԸ...	51
ՈՒՇԱՅԵԼ ԵՄ	52
ԿԿԻՍԵՄ	53
ՄԻԱՅՆՈՒԹՅԱՆ ԵՐԿՈՒՆՔԸ	54
ԳԱԼԴ	56
ԳՐԻԶԸ ԻՄ ԹԱՅ ՕՐԵՐԻ	57
Ահա...	58
ՆԱԽ ԵՎ ԱՌԱՋ	59
ՔՈ ԺՊԻՏԻՅ	60
ԻՆՔՆԱՅՐՈՒՄ	61
«ԿԵՂԾ ԿՌՈՒՊ»	62
ՀԵՌՎԻՅ	63
ԵՐԿՈՒ ԽԱՂԱՔԱՐՏ	64

ՊԱՏԱՌՈՏԱԾ

Մեղավորները դժոխք են գնում	67
Ա-ԻՆ	67
ՎԱՐԴԱՆԻՆ	67
Քո սև աչքերը կապույտ են նայում...	68
Իմ սպիտակով քո սևի մեջ	68
Իմ քաղաքը մնաց հետս	68

Դու ծակեցիր իմ երկինքը	69
Կապույտ ծաղիկը պոկեցիր	69
Ես փշրեցի երկինքս	69
Բանաստեղծություններս	70
Ամեն անգամ, երբ	70
Հիմա, երբ բաց է վանդակիս դուռը	70
Ես կծեցի շրթունքդ	71
Ես թողնում եմ ձանապարհս փոշոտ	71
Իմ մթում լույս է	71
Մայր... ..	72
Քեզնից սպի ունեմ կրծքիս	72
Մտքի պես	72
Մոլորակ ես	73
Հիմա, երբ տունն	73
Հետո նկատեցի	73
ԵՐԿՈՒ ԴԻՄՈՒՄ	74

ԹԱՅ

ՈՐԴԵՐԸ	77
ԲԱՐՁՐ... ..	80
ՊԱՏՈՒՀԱՆԻՅ ԱՅՆ ԿՈՂՄ... ..	83

Քրիստինե Հովիկի Հովսեփյան
ՄԵՎ ԹՈՒՂԹ
(բանաստեղծություններ)

Кристине Овиковна Овсепян
ЧЕРНАЯ БУМАГА
(стихотворение)

Խմբագիրներ՝ Արմեն Ավանեսյան
Շանթ Մկրտչյան
Զնավորումը՝ Արմինե Քոչարյանի
Սրբագրիչ՝ Արփինե Մարգարյան
Լուսանկարը՝ Լևոն Օսիպյանի
Ուրվանկարները՝ Գարնե Գրիֆիթսի

Չափսը՝ 60x84 1/16:
Թուղթը՝ օֆսեթ 70գ/մ² 1.8 ծավալային կշիռով:
Ծավալը՝ 5.5 տպ. մամուլ:
Տառատեսակը՝ Ghabuzian Gohar:
Տպաքանակը՝ 400:
Տպագրվել է «Լևոն Մարգարյան ԱԶ» տպագրատանը:
Հասցե՝ ք. Երևան, Մայիսի 9 փ. տ. 23:
Գինը պայմանագրային:



ԱՐՄԱՎ

հրատարակչություն

Ք. Երևան, 16 ք. 18 / 94
հեռ.՝ (+374) 10-34-73-35
էլ.փոստ՝ armav-hrat@mail.ru